
**ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅ-ԻՌԱՆԴԱԿԱՆ
ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻՆ**

2009 թ. սեպտեմբերի 7-9-ին Երևանում տեղի ունեցավ «Վաղ միջնադարյան Իռլանդիա և Հայաստան. հոգևոր և բանահյուսական ավանդույթների զուգահեռներ» խորագրով գիտաժողով: Այն անցկացվեց Երևանի պետական համալսարանի նախաձեռնությամբ և Հայաստանում Իռլանդիայի դեսպանության աջակցությամբ:

Սեպտեմբերի 7-ին գիտաժողովի հյուրերը այցելեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և Զվարթնոցի տաճար: Հովհաննես Թումանյանի թանգարանում տեղի ունեցավ գիտաժողովի բացման արարողությունը, որին ներկա էր նաև Հայաստանում Իռլանդիայի դեսպան Ջեֆրի Քիթինգը: Դեսպանը ողջունեց այն բոլոր գիտնականներին ու գիտաժողովի մասնակիցներին, ովքեր իրենց ավանդն են ներդնում հայ-իռլանդական մշակութային կապերի ամրապնդման գործում: Ողջունի խոսքերով հանդես եկան Հովհ. Թումանյանի թանգարանի տնօրեն Նարինե Թուխիկյանը և ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Սեդա Գասպարյանը:

Բացման արարողությունից հետո թանգարանի հեքիաթագիտության բաժնի «*Fabula armeniaca*» ծրագրի նախաձեռնությամբ և Հայաստանում Իռլանդիայի դեսպանության օժանդակությամբ իրականացվեց ցուցահանդես, որտեղ ներկայացված էին Օսկար Ուայլդի հեքիաթների հայերեն և ռուսերեն թարգմանությունները՝ հայ անվանի վարպետ Վ. Սուրենյանցի նկարազարդմամբ, ինչպես նաև իռլանդաբնակ հայազգի նկարչուհի Նատալյա Աբելյանի «Էյրի Քարե վեպը» (յուդանկարներ և լուսանկարներ)՝ նվիրված Իռլանդիայի մշակութային ժառանգության քարեղեն նմուշներին (բարձր խաչեր, քանդակներ և այլն): Ցուցահանդեսում ներկայացված էին նաև ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Աշոտ Մամաջանյանի «Մասնա ծոեր» էպոսի պատկերազարդումները: Նշենք, որ այս նկարազարդումներով էպոսի ռուսերեն տարբերակը լույս է տեսել 1939 թ. և նվիրված է էպոսի 1000-ամյակին:

Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 8-ին, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի դահլիճում տեղի ունեցավ գիտաժողովի առաջին նիստը՝ նվիրված վաղ շրջանի առասպելներին ու պատմություններին:

Նիստի նախագահողն էր Օլյաթերի համալսարանի դոկտոր, իռլանդական կողմից գիտաժողովի կազմակերպիչ Մաքսիմ Ֆոմինը: Գիտաժողովի առաջին զեկուցողն անվանի բանագետ և էպոսագետ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Հարությունյանն էր: Նա հանդես եկավ «Կրոնաառասպելական հավատալիքներն ու ծիսական արարողությունները «Մասնա ծոեր» հերոսավեպում» զեկուցումով, որի մեջ դիտարկված են հայ հերոսավեպում համաձուլված հինառասպելադիցաբանական, պատմական ավանդություններ, հավատալիքներ ու պատկերացումներ, որոնք էլ ստեղծել են հերոսական մի ոգի, որի կրող հերոսները դիտվել են իբրև

ապրած և գործած ազգային նախնիներ: Հեղինակը քննության առարկա դարձրեց Մոկաց տիպաբանական խմբի պատումները, որոնք աչքի են ընկնում իրենց վաղնջականությամբ և բանաստեղծական հնավանդ արվեստով: Այդ պատումների ճնշող մեծամասնությունը սկսվում է «Ողորմի» կոչվող նախաբանով, որը, փաստորեն, նախնիների հիշատակը օրհնաբանող բանաձև է՝ կապված մեռելների հիշատակը օրհնաբանող ծեսի հետ: Եվ «Ողորմի» նախերգանքները դարձել են հերոսավեստում ծավալվող իրադարձությունների նախամուտք:

Հետաքրքիր զեկուցումներով հանդես եկան նաև գիտաժողովի հյուրերը: Օլսթերի համալսարանի դոկտոր Շեմրա Մաք Սախունան իր «Վիշապի սպանությունը և ջրի առասպելները վաղ իռլանդական, հնդեվրոպական և մերձավոր արևելյան ավանդույթներում» զեկուցման մեջ ներկայացրեց վիշապի սպանության հնդեվրոպական առասպելին առնչվող մի շարք երևույթներ վաղ իռլանդական լեգենդներում ու դիցաբանության մեջ և փորձեց մեկնաբանել վիշապի առասպելին առնչվող մի շարք մոտիվներ ու թեմաներ, որ մեզ են հասել ավանդապատումներից և միջնադարյան գրույցներից: Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց անդրաշխարհի բնույթին, ջրի առասպելներին, ձիերի վերաբերյալ լեգենդներին, երկվորյակների ծննդյան, թագավորությունների ստեղծման ու անկման, արդարության և ճշմարտության մասին գրույցներին: Ջեկուցման մեջ քննարկվեցին նաև աստվածային ու առասպելական էակների մասին գրույցները և համեմատվեցին ինչպես հնդեվրոպական, այնպես էլ հայկական համարժեքների հետ:

«Ծագումնաբանական ավանդագրույցները միջնադարյան Իռլանդիայում» թեմայով զեկուցում կարդաց Քորքի համալսարանի դոկտոր Ջոն Քերին: Նշելով, որ իռլանդացիները, որպես Արևմտյան Եվրոպայի առաջին ժողովուրդը, քրիստոնեությունն ընդունելով առանց Հռոմեական կայսրության մաս կազմելու՝ կանգնած են եղել ընտրության կրկնակի հնարավորության առաջ. հարմարվել և՛ հունա-հռոմեական քաղաքակրթության պատմական սխեմային, և՛ Գիրք Ծննդոցում շարադրված ազգաբանությամբ: Եվ, ընդառաջ գնալով այս հնարավորությանը, անօրինակ եռանդով ու երևակայությամբ ստեղծել են ծավալուն, կեղծպատմական բարդ գրականություն: Իր ելույթում զեկուցողը քննեց այդ գրականության գլխավոր թեմաները՝ անդրադառնալով դրանցից յուրաքանչյուրին:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ. գ. դ. Արմեն Պետրոսյանը իր «Հայաստան և Իռլանդիա. նախապատմության առասպելներ» զեկուցման մեջ հայկական և իռլանդական ազգածին առասպելական նախնիների համեմատական քննությամբ ցույց տվեց աչքի ընկնող ընդհանրություններ, որոնք բացատրվում են հնդեվրոպական, հին առաջավոր-արևելյան և աստվածաշնչյան կապերով:

Գիտաժողովի երկրորդ նիստի զեկուցումները նվիրված էին քրիստոնեական կրոնի տարածմանն ու ընդունմանը (նախագահող՝ դոկտոր Ջոն Քերի): Օլսթերի համալսարանի դոկտոր Մաքսիմ Ֆոմինն իր «Քրիստոնեացման վաղիռլանդական լեգենդներ և առնչվող թագավորական խորհրդապատկերներ» զեկուցման մեջ քննեց քրիստոնեական այն լեգենդները, որոնք պահպանվել են սրբախոսական

երեք աղբյուրներում՝ Ս. Բրիջիտի, Ս. Պատրիքի և Ս. Քոլումբիլի վարքերում: Այնուհետև ելույթի երկրորդ մասում զեկուցողը համադրեց իռլանդական փաստերը հայկական նյութի հետ՝ գլխավորապես հենվելով Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» վրա և նշեց այն թեմաները, որոնք ունեն իռլանդական համարժեքներ:

Ուշագրավ էր Երևանի պետական համալսարանի դասախոս, պ. գ. դ. Հայկ Հակոբյանի «Քրիստոնեության ընդունումը Հայաստանում (լեզենդն ու իրականություններ)» զեկուցումը: Հայաստանում քրիստոնեության տարածումը դիտելով մի քանի հարթության վրա՝ զեկուցողը գտնում է, որ այդ գործընթացը պետք է ընդհանրություններ գտնի աշխարհագրական ավելի լայն շրջանակներում տեսանելի երկրների և ազգերի հետ: Եվ այս հարթություններից մեկում ցույց է տալիս գուգահեռներ հայերի ու իռլանդացիների միջև, մասնավորապես որպես քրիստոնեության տարածողների՝ մեկը Առաջավոր Ասիայի հյուսիսում և արևելքում, մյուսը՝ Եվրոպայի հյուսիս-արևմուտքում:

«Պարականոն ավանդույթներ, արվեստի և բանահյուսություն» խորագրով երրորդ նիստը (նախագահող՝ Արմեն Պետրոսյան) բացեց Քորքի համալսարանի դոկտոր Քաթրինա Օ. Դոխերթին՝ «Զուգահեռներ իռլանդական և հայկական պարականոն գրվածքների միջև» զեկուցումով, որի մեջ հիմնականում այն գաղափարն է արծարծվում, որ շատ դեպքերում կան սերտ համապատասխանություններ հայկական և իռլանդական տեքստերի միջև, սակայն «Դատաստանի նշաններին» առնչվող լատիներեն տեքստերի վաղ պատմության վկայությունների պակասը խոչընդոտում է վերջնականապես ճշտել՝ որտեղից է սկիզբ առել այս նյութը:

Երևանի պետական համալսարանի մշակութաբանության ամբիոնի վարիչ, պ. գ. դ. Համլետ Պետրոսյանը իր «Վաղ քրիստոնեական հայկական կոթողների և իռլանդական բարձր խաչերի ընդհանրությունները նոր գյուտերի լույսի ներքո» զեկուցման մեջ նշեց, որ հայ-իռլանդական մշակութային փոխառնչությունների առումով պատմամշակութային էական որոշ փաստերի կողքին հատուկ ուշադրություն է դարձվել իռլանդական բարձր խաչերի և խաչքարերի միջև եղած ընդհանրություններին: Եվ քանի որ իռլանդական բարձր խաչերի էական առանձնահատկություններից են ազատ կանգնած կոթողն ու շրջանի մեջ ներառված խաչը, որպես համեմատության առարկա առաջին հերթին նկատի են առնվում այն խաչքարերը, որոնց հորինվածքում խաչը հանդես է գալիս որպես առանձին կանգնած խաչակոթողի արտապատկերում կամ էլ ներառվում է շրջանի մեջ: Հայաստանի վաղքրիստոնեական պատկերագրական փաստերի քննությամբ զեկուցողը հավաստում է, որ հենց այդ շրջանի մեջ ներառված ձողաբարձ խաչերն են համարվել Գրիգոր Լուսավորչի ու Տրդատի կողմից կանգնեցված խաչեր: Շրջանի մեջ ներառված խաչի բեկորներ են հայտնաբերվել Մեծարանից և Արցախի Տիգրանակերտի պեղումների ընթացքում: Եվ հայտնաբերված խաչերի մաս կազմող պատկերաբանակալիք օրինակների համեմատական քննությունները հավաստում են, որ Հայաստանում V դարից ի վեր գոյություն են ունեցել ազատ կանգնած շրջա-

նի մեջ ներառված խաչով պսակվող կոթողներ, որոնց նմանությունը իռլանդական բարձր խաչերի հետ ակնհայտ է:

Հրաշապատում հեքիաթի ամենահետաքրքիր երևույթներից մեկի՝ կերպարանափոխության մասին («Կերպարանափոխությունը հայկական և իռլանդական հրաշապատում հեքիաթներում») զեկուցում ներկայացրեց հայկական կողմից գիտաժողովի կազմակերպիչ, ԵՊՀ-ի դասախոս, բ. գ. դ. Ալվարո Ջիվանյանը: Ըստ զեկուցողի, նման միջտեքստային ուսումնասիրությունը հնարավորություն կընձեռնի հեքիաթում բացահայտել իմաստային նոր շերտեր: Իռլանդական օրինակները վերցված էին երեք հայտնի աղբյուրներից՝ Այզաք Յեյթսի, Փեթրիք Կենեդիի և Հենրի Գլեսիի ժողովածուներից, իսկ հայկական օրինակները՝ Գ. Շերենցի, Տ. Նավասարդյանի և Գ. Տեր-Աղեքսանդրյանի ժողովածուներից:

Գիտաժողովի հանդիսավոր փակումից հետո հյուրերի համար կազմակերպվեց էքսկուրսիա՝ Մատենադարանի ցուցասրահներում: Հաջորդ օրը գիտաժողովի հյուրերը եղան Գառնիում և Գեղարդում:

ԼՈՒՄԻՆԵ ՂՈՒԵՁՅԱՆ